Հաստատված է
«Հայաստանի պետական տնտեսագիտական
համալսարան» պետական ոչ առևտրային
կազմակերպության գիտական խորհրդի
2023 թվականի փետրվարի 28-ի N 5 - 3 որոշմամբ,
գիտական խորհրդի նախագահ, ռեկտոր

_____ Դ. Ռ. Գալոյան

28 փետրվարի 2023 թ.

ԿԱՐԳ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ, ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ, ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿՄԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով սահմանվում է «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ ՀՊՏՀ) ակադեմիական կազմի կողմից ՀՊՏՀ «Տնտեսագետ» հրատարակչությունում հրատարակման ներկայացվող ուսումնական, ուսումնամեթոդական և ուսումնաօժանդակ գրականության ներկայացման և հրատարակման ընթացակարգը:

2. Ուսումնական, ուսումնամեթոդական և ուսումնաօժանդակ գրականությունը ուսումնակրթական բնույթի ցանկացած հրապարակում է, որը

պարունակում է ուսումնական գործընթացի համար նախատեսված համակարգված տեղեկատվություն:

3. Ուսումնական, ուսումնամեթոդական և ուսումնաօժանդակ գրականություն են համարվում.

1) դասագիրքը, որը տվյալ դասընթացի հիմնական ուսումնական գրականությունն է, որտեղ համակարգված ներկայացված է դասընթացի ուսումնական ծրագրի բազային գիտելիքները, որոնք պարտադիր են դասընթացի յուրացման համար: Դասագրքի բովանդակությունը պետք է բավարարի պետական կրթական ստանդարտի պահանջներին և ներառի դասընթացի ամբողջ ծրագիրը: Դասագիրքը պաշտոնապես հաստատվում է Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից, որպես այս տեսակի հրապարակում.

2) ուսումնական ձեռնարկը, որը ուսումնական ծրագրին համապատասխան առարկայի (դասընթացի, մոդուլի), դրա առանձին բաժինների, մասերի որոշակի մեթոդաբանությամբ համակարգված շարադրանքն է, որը մասամբ կամ ամբողջությամբ կարող է փոխարինել դասագրքին.

3) ուսումնամեթոդական ձեռնարկը (մեթոդական ձեռնարկներ, թեմատիկ պլանավորումներ, գործնական, լաբորատոր աշխատանքների կատարման, խնդիրների լուծման ուղեցույցներ և այլ բնույթի ուսումնամեթոդական աշխատանքներ) ընդգրկում է ուսումնական առարկայի (դասընթացի, մոդուլի), դրա առանձին մասերի և բաժինների դասավանդմանն ուղղված մեթոդական նյութեր և երաշխավորություններ.

4) ուսումնաօժանդակ գրականությունը ուսուցման գործընթացին օժանդակող գրականություն է, որը պարունակում է լրացուցիչ տեղեկատվություն տվյալ ուսումնական առարկայի (դասընթացի, մոդուլի) վերաբերյալ կամ գործնական առաջադրանքներ, խնդիրներ և վարժություններ, որոնք նպաստում են ուսումնական նյութի յուրացմանը, ամրապնդմանը և ուսանողների, ասպիրանտների (այսուհետ՝

սովորող) գիտելիքի, կարողությունների ու հմտությունների ստուգմանը և գնահատմանը:

4. Ուսումնական, ուսումնամեթոդական և ուսումնաօժանդակ գրականության պատրաստումն ու հրատարակումը իրականացվում է ՀՊՏՀ հրատարակչության տարեկան թեմատիկ պլանին համապատասխան:

2. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ, ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

5. Ուսումնական և ուսումնամեթոդական գրականության բովանդակությունը պետք է բավարարի հետևյալ հիմնական պահանջներին.

1) գիտականություն՝ ուսումնական գրականության բովանդակությունը պետք է կազմված լինի հաշվի առնելով դասավանդվող առարկայի վերաբերյալ ժամանակակից տեսամեթոդական մշակումները, գործնական գիտելիքը ու կիրառական հմտությունները: Ուսումնական, ուսումնամեթոդական և ուսումնաօժանդակ գրականության գիտականությունը պետք է նպաստի սովորողների մոտ առաջադրված խնդիրների ուսումնասիրության ընդհանուր և հատուկ մեթոդների վերաբերյալ պատկերացում ձևավորելուն, ինչպես նաև համապատասխանի ժամանակակից գիտական և գիտագործնական փորձին.

2) մատչելիություն՝ գրականության բարդության և խորության աստիճանը պետք է համապատասխանի տվյալ կրթական ձևի առանձնահատկություններին.

3) համակարգվածություն և հաջորդականություն՝ գրականությունը պետք է ապահովի սովորողների կողմից ուսումնասիրվող կրթական մոդուլի շրջանակներում որոշակի գիտելիքների համակարգի յուրացման հաջորդականությունը:

3. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ, ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀՊՏՀ «ՏՆՏԵՍԱԳԵՏ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀՐԱՏԱՐԱԿՄԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

6. ՀՊՏՀ ակադեմիական կազմի կողմից ուսումնական, ուսումնամեթոդական և ուսումնաօժանդակ գրականությունը մշակվում և ներկայացվում է նախնական քննարկման՝ համապատասխան կրթական ծրագիրն իրականացնող ամբիոն: Ամբիոնը կազմակերպում է քննարկում և առնվազն երեք փորձագետի դրական եզրակացության հիման վրա երաշխավորում է հրատարակման ներկայացվող գրականության որակը և համապատասխանությունը կրթական ծրագրով ներակայացվող պահանջներին:

7. Ամբիոնի դրական եզրակացության դեպքում ուսումնական, ուսումնամեթոդական և ուսումնաօժանդակ գրականությունը, ամբիոնի նիստի արձանագրության քաղվածքի հետ ներկայացվում է ՀՊՏՀ գիտության բաժին:

8. ՀՊՏՀ գիտության բաժինը կազմակերպում է ներակայացվող ուսումնական և ուսումնամեթոդական գրականության արտաքին անանուն («կույր») գրախոսություն երկու անկախ (արտաքին) փորձագետների կողմից:

9. Գրախոսության ներկայացված գրականությունը փորձագետների կողմից գնահատվում է սույն կարգով սահմանված չափորոշիչներով, որոնց ամփոփման արդյունքում փորձագետները կայացնում են հետևյալ 3 որոշումներից մեկը.

1) թույլատրվում է տպագրության.

2) թույլատրվում է տպագրության նշված դիտողությունները վերացնելուց հետո.

3) չի թույլատրվում տպագրության:

10. Եթե գրախոսող փորձագետների եզրակացությունը ենթադրում է «թույլատրվում է տպագրության նշված դիտողությունները վերացնելուց հետո», ապա տպագրության ներկայացված գրականությունը վերադարձվում է հեղինակին

(հեղինակներին) թերությունները շտկելու կամ պարզաբանում ներկայացնելու համար:

11. Փորձագետների տարբերվող կարծիքների դեպքում (թույլատրվում է և չի թույլատրվում տպագրության) աշխատանքն ուղարկվում է երրորդ փորձագետի: Եթե ներգրավված լրացուցիչ փորձագետը ևս աշխատանքը չի թույլատրում տպագրության, ապա այն վերադարձվում է հեղինակին (հեղինակներին) և հանվում ՀՊՏՀ հրատարակչության տարեկան թեմատիկ պլանից:

12. Գիտության բաժինը հրատարակման ներկայացված ուսումնական և ուսումնամեթոդական գրականությունը սույն կարգի 8-րդ կետով նախատեսված դրական փորձագիտական կարծիքների առկայության դեպքում ներկայացնում է ՀՊՏՀ գիտական խորհրդին կից հրատարակչական հանձնաժողով, որն էլ որոշում է կայացնում գրականությունը հրատարակման երաշխավորելու և գիտական խորհուրդ ներկայացնելու վերաբերյալ:

13. Գիտական խորհրդի նիստում անդամների բաց քվեարկությամբ որոշում է կայացվում գրականության հրատարակման վերաբերյալ:

14. Գիտական խորհրդի կողմից հրատարակման մասին որոշումը կայացվելուց հետո գիտության բաժինը հրատարակման ներկայացված ուսումնական, ուսումնամեթոդական և ուսումնաօժանդակ գրականությունը փոխանցում է «Տնտեսագետ» հրատարակչություն:

15. «Տնտեսագետ» հրատարակչությունն իրականացնում է հրատարակման նախապատրաստման գործընթացն ու ապահովում հրատարակվող գրականությունը համապատասխան գրիֆով:

16. Դասագրքերից և ուսումնական ձեռնարկներից բացի, ուսումնական, ուսումնամեթոդական և ուսումնաօժանդակ գրականությունը համապատասխան գրիֆը ստանալուց հետո հրապարակվում են միայն էլեկտրոնային տարբերակով:

17. «Տնտեսագետ» հրատարակչություն ներկայացվող ուսումնական, ուսումնամեթոդական և ուսումնաօժանդակ գրականության խմբաքանակի հրատարակումը և բաշխումը պետք է իրականացվի այնպես, որ բավարարի.

1) ՀՊՏՀ գիտական խորհրդի 2016 թվականի դեկտեմբերի 1-ի նիստում հաստատված «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի «Տնտեսագետ» հրատարակչությունում հրատարակությունների իրականացման աշխատակարգով» սահմանված նպատակային բաշխումը.

2) ՀՊՏՀ գրադարան ներկայացվող գրականության խմբաքանակը պետք է լինի առնվազն 5/1 հարաբերակցությամբ (տվյալ դասընթացն ուսումնասիրող յուրաքանչյուր հինգ ուսանողին՝ առնվազն մեկ տպագիր գրականություն համամասնությամբ):

18. «Տնտեսագետ» հրատարակչության կողմից հրատարակված ուսումնական, ուսումնամեթոդական և ուսումնաօժանդակ գրականության գույքային իրավունքը պատկանում է ՀՊՏՀ-ին:

19. Ուսումնական, ուսումնամեթոդական և ուսումնաօժանդակ գրականության լույս ընծայումից հետո հեղինակը (հեղինակները) սահմանված կարգով ստանում են իրենց համար նախատեսված գրականության խմբաքանակը:

20. «Տնտեսագետ» հրատարակչության բոլոր հրատարակությունների էլեկտրոնային տարբերակները տեղակայվում են ՀՊՏՀ գրադարանի կայքէջում՝ բաց հասանելի ռեժիմով:

ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ, ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՕԺԱՆԴԱԿ ԳՐԱԽՈՍՈՒԹՅԱՆ

N	Գնահատման չափորոշիչ	Համապատասխանությունը գնահատման չափորոշչին		
		ամբողջությամբ համապատասխանում է	մասամբ է համապատասխանում	չի համապատասխանում
1.	Աշխատանքի համապատասխանությունը տվյալ կրթական մոդուլին			
Հիմնավորում				
2.	Դիտարկվող թեմայի արդիականությունը և ավարտունության աստիճանը			
Հիմնավորում				
3.	Ժամանակակից գիտական տեսությունների և պրակտիկ փորձի արտացոլման աստիճանը			
Հիմնավորում				
4.	Օգտագործված մեթոդների գիտականության, հավաստիության, հիմնական դրույթների հիմնավորվածության աստիճանը			
Հիմնավորում				

5.	Գործնական խնդիրների լուսաբանման և արդիականության աստիճանը			
Հիմնավորում				
6.	Կապը կրթական ծրագրով նախատեսված այլ դասընթացների հետ			
Հիմնավորում				
7.	Համապատասխանությունը ուսումնական գրականության կառուցվածքի ձևավորմանը ներկայացվող պահանջներին			
Հիմնավորում				

Գրախոսի եզրակացությունը՝

- ☐ թույլատրվում է տպագրության
- ☐ թույլատրվում է տպագրության նշված դիտողությունները վերացնելուց հետո
- ☐ չի թույլատրվում տպագրության